

Ներկայ թիւին նիւթերը

1. Բառոյական

Որքերու փրկութեան չարաթիւն առթիւ

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

2. Ոչ բաղաձայնիւր ազգերու կեանքն

Փէդիշապաշտութիւն. — Փէդիշներ. — Կախար.
դութիւն. — Կախարդ. — Հանդերձեալ կեանք.

ՎԱՆԱԿԱՆ

3. Իմաստասիրական

Իմացական կեանք: Պատկեր. —

Պատրանք. — Երազ:

ՍՈՒՐՄԱԿ ՆՈՐԴԱՐԵԱՆ

4. Վեպի բաժին

Պզտիկ Բանտարկեալը: Յովսէփ Քրիզէ Գօն

Պիւլլէրի բնակարանին մէջ. — Յովսէփ Քրիզէի

Օրագիրը, Տարապարհակ աշխատութիւնները:

Թրգմ. Կ. ՎԻՃՈԿ

5. Հանելուկի բաժին



Մ. ՍՈՒՐԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ ԱՌԱՒՈՏ.

ՊԱՊԸ ԱԼԻ ՃԱՏՏԷ, ԷՊՈՒՍՍՈՒՈՒՏ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 1

ՄԷՍԷՐՐԷԹ ՕԹԷԼԻ ԴԻՄԱՑ

ԳՐԱՏԱՆ ՃԻԴ.

Վանառում, չափաւոր շահով, դպրոցական եւ ամէն տեսակ ու ամէն լեզուէ գիրքերու, բուրքի, տետրակի եւ դպրոցական ամէն կարգի առարկաներու: Ինչպէս նաեւ մեծամասնակ եւ փոքրամասնակ վանառում գիրքի եւ բերքի համար ամէն տեսակ բուրքերու:

ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՃԻԴ.

Խիստ հաշակաւոր եւ անմրցելի ածուն գինով սպաւորութիւն՝ ամէն լեզուէ գիրքերու, բերքերու, ազդերու, հարունիքի հրաւիրագիրներու, համակազմութիւններու, մանագրներու եւ զանազան սպաւորական գործեր:

«آراوود» شفقه ابق بمجوده
باب عالی ابو السعود
جاده سی نوسرو ۱

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼԻՍ

Տարեկան (40 թիւ) 120 Դահ.

ԵՒ ԳԱԻԱՌ

Վեցամսեայ (20 ») 60 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան (40 ») 20 Ֆրանկ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. — Առաւօտ գրական եւ գիտական հանդէսին հասցէն է՝ Պապը Ալի, Էպուստոլու ճառարէ Մէսէրրէթ օթելի դիմաց թիւ 1

Գ. ՄԱԳՈՒԼԵԱՆ ՈՐԴԻՔ

ՄԵԼԻՈՆ Ա.

ՄԵԼԻՈՆԵԱՆ

ՕՐԹԱԳԻԻԴ, ԹՐԱՄՎԱՅ ՃԱՏՏԷ ԹԻԻ 10

Կը ստանձնէ կալուած սկան առաւ ծախի, միջնորդութեան եւ փոխառութեանց գործեր. Կը հետապնդէ պետական բոլոր պաշտօնատուներու վերաբերեալ գործեր. կը կատարէ կալուածական ու ֆերադի ամենէն կնճռոտ գործողութիւններ, երեւան կը բերէ ժառանգ մնացած անյայտ գետիւններ եւ զանազան կալուածներ.

Թէլէֆօն Բերա 2497



ԱՇԽԱՐՀԻՍ ԼՍԻԱԴՈՅՆ ԺԱՄԱՅՈՅՅԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ ՊԵՌՆ 1914
ՀԱՍՑԷ՝

Պոլիս Եկնի ճամբիքիւ 40
Թէլէֆօն. Պոլիս 103

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՈՐԲԵՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԶԱԲԱԹԻՆ ԱՌԹԻ

Տօնական օրերու մէջ, ամէն մարդ, մեծ թէ պզտիկ, տեսակ մը հրճուանքի մէջ կ'ապրի: Այդ հանդիսաւոր վայրկեաններուն մարդկային էակը շէն և զուարթ վիճակի մը կ'ենթարկուի տեսակ մը հոգեկան ցնցումով: Տօնական օրերուն, ըլլան անոնք ազգային, ըլլան անոնք կրօնական, անցեալ տարիի խոնջէնքի ծանրութենէն մարդ դուրս կուգայ և նոր ուժով մը, եռանդով մը լեցուած, կը պատրաստուի նետուիլ յառաջիկայ տարիներու աշխատութեան:

Յնժուժի այս օրերուն ամէն մարդ իրեններուն, իր սիրակցորդներուն վայելքներ ըմբոշխնել տալու ջանադիր, անցեալ տարիի աշխատութեան արդիւնքը կը շուայէ, ի բոլոր սրտէ, գեղեցիկ կեանքով մը ապրեցնելու համար զանոնք:

Բարեբախտ պզտիկներ, ահա այդ կեանքը կ'ապրին: Այդ պզտիկները իրենց շուրջը, ընտանեկան հարազատ բոյնի մը մէջ, զուարթագէժ հայրերու և մայրերու գուրգուրանքին առարկայ կը դառնան, այնպիսի հմայքոտ գուրգուրանքի մը որ ծնողքէն հառաքայթելով կը թափանցէ փոքրիկներու սրտին և անոնց մէջ կը ստեղծէ ազնիւ և գոհունակ հպարտութիւն մը:

Բարեբախտ նոր սերունդներ այս նուիրական օրերուն կուրծքերնին կ'ուռեցնեն հպարտութեան շունչով մը:

Ծնողքէն զաւկին նուիրուած, ներշնչուած այդ վայելքը և զաւկին գէպի ծնողքը արտայայտուած երախտապարտ զգացումը, այս օրերուն առաւապանքի օրերէն վերջ ամէն հայու, մանաւանդ ամէն հայ փոքրիկներու սրտին ու հոգիին մէջ գոյութիւն ունի:

— Ո՛հ, դժբաղդաբար, զրկուած են հայ նահատակներուն ժառանգորդները այդ գեղեցիկ վայելքէն:

Բազդէն զրկուածներ, ծնողագուրկ զաւակներ նոյն հոգեկան վայելքին արժանի չե՞ն միթէ: Ինչո՞վ են մեղաւոր անոնք, որ այսօր մօր մը սիրալիր համբոյրէն զրկուած են, և հայրական խնամքէ հեռու կ'ապրին կտրօտալիր:

Բազդին գեղեցիկ և ծիծաղկոտ պատահութիւններուն ենթակայ ամէն մանուկ, ամէն նորահաս, եթէ իր մէջ զգայ այն կեանքը, որ այսօր կ'ապրին այդ տարաբախտները՝ զուրկ ամէն գուրգուրանքէ և ամէն խնամքէ, պիտի փութայ իր վայելքներէն բաժին մը, մեծ բաժին

մը բերել և նսւիրել անոնց, որոնք ընտանեկան բոյնի մը, դժուարից շունչի մը ներքե կազանդն ու Մնուկդը չեն տօնէր: Ազգին այդ հողե-հատորները այս օրերուն, երեւակայութեամբ տարուած, դէմ յանդիման կը պատկերացնեն անցեալ կեանքը, յորում իրեն նմաններ, բայց բազմաւորներ կ'ապրին զուարթագին կայստելով խնջոյքի սեղաններու շուրջ. անոնք զնդակահար թռչունի մը, բոյնէ դուրկ ձագուկներու պէս իրենց կուրծքին տակ անթեղուած հառաչն ու հեւքը կը պոռթկացնեն անէծքներ տեղատարափելով անոնց գլխուն՝ որոնք պատճառեղան անդթօրէն իրենց այս թշուառ կացութեան:

Բայց չե՞նք կրնար միթէ մասամբ մը մեղմացնել և մոռացութեան մատնել այն վերջիշումները, որոնք կսկիծ ու կոտտանք մը կը ստեղծեն որբերու սրտին մէջ: Մեր պարտքն է այդ կսկիծն, ու կոտտանքը հեռացնել որբերու սրտէն, տալով անոնց մխիթարանք և մասնակի վայելք: Թէեւ որչափ որ գուրգուրանք շռայլենք և որչափ որ անոնց փրկութեան գործին նուիրուինք դարձեալ չենք կրնար տալ անոնց այն, որ անոնք ունենալ կ'ուզեն: Անոնք կ'ուզեն հայր և մայր, քոյր և եղբայր: Երբ մենք նսւիրումի այս գործին կը մղուինք, մեր վրայ երկու պարտք կը ծանրանայ, մին բոլորանուէր նուիրուիլ անոնց վշտին մեղմացումին և միւսը՝ ջանալ չենթարկուիլ անոնց վիճակին, ըստ ամենայնի նուիրուելով ինքնապաշտպանութեան: Աջակցութեամբ, իրերաօգնութեամբ և իրարու օժանդակելով միայն կրնանք բազմին հարուածներէն և զազանարարոյ մարդոց ստեղծած հարուածներէն ազատիլ:

Նորահա՛ս սերունդ, վայելքէդ բաժին հանէ՛, և տա՛ր՝ տուր զայն որբերու Փրկութեան Յանձնաժողովին:

Գնա՛, տա՛ր լուծադ, տար նուէրդ և ապրեցուր զանոնք քու խնջոյքի օրերովդ:

ՀՕՐԸ ՅԻՇԱՏԱԿԸ ԱՆՄԱՀԱՅՆՈՂ ՄԸ

Անցեալ Կիրակի, Յնվր. 9, Ալթը Մէրմէրի եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ Պատարագ-Հոգեհանգիստ ի յիշատակ հանգուցեալ Տիար Կոպեռնիկ Սաչատուրեանի հօր հոգւոյն. Տիար Կոպեռնիկ Սաչատուրեան նոյն թաղին ազգ. վարժարանը վերաշինած է: Պատարագին ներկայ էին բարերարին որդեգիրներէն զատ՝ Նարլը Գուրի որբանոցին որբերը: Պատա-

րագիչն էր Նարոյեան սրբազան, որ պերճախօս քարոզով մը թէ հանդուցեալին բարեմասնութիւնները թուեց և թէ Տիար Կոպեռնիկ Սաչատուրեանի գործունէութիւնն ու ձեռներէցութիւնը ի վեր հանեց շեշտելով միանգամայն անոր բարերարութեանց մէջ ունեցած առատաձեռնութիւնը:

Տիար Կոպեռնիկ Սաչատուրեան այս առթիւ լիսուատ նուէրներ բաշխեց առ որ անկ է:

ՈՁԷՔԱՂԱՅԱԿԻՐԹ ԱԶԴԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ԱՓՐԻԿԷԻ ԽՍՓՇԻԿՆԵՐՆ ՈՒ ՍԵՒԵՐՐ

Փեղիւսապատերիւն եւ Փեղիւսեր.

— Կախարդութիւն. — Կախարդ. —

Հանդերձեալ Կեանք:

ՓԵՂԻՇԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ
ՓԵՂԻՇՆԵՐ. — Փեղիւս կը նշանակէ
բժժանք (amulette) կամ բլացֆ
(talisman, բըլբսըֆ): Ոսկի եղե-
րաց խափշիկներու յարգանքի ար-
ժանի առարկաները Փորթուկալ-
ցիներուն կողմէ կը կոչուին Փէ-
ղիշ. իսկ խափշիկներու կողմէ
կը կոչուին գրի-գրի (gri-gri):
Գերբնական յասկութեամբ օժ-
տուած այդ առարկաներու պաշ-
տամունքը կը կոչուի փեղիւս-
ապատերիւն (fetichisme): Փէ-
ղիշը հասարակ առարկայ մըն է
զոր սեւը կը պահէ, կը յարգէ և
կը պաշտէ, վասնզի կը կարծէ թէ
ան բնակարան մըն է ոգիներ-
բու: Քար մը, արմատ մը, փե-
տուր մը, խեցի մը, նկարէն պատ-
տառ մը, կենդանիի մը ակռան,
օձի խորիւ մը, Կուփ մը, հին ու
ժանգոտ սուր մը, վերջապէս ա-
մէն բան կրնայ փէղիշ մը ըլլալ
խափշիկին համար, բաւական է
որ ու է կերպով խափշիկին մէջ
արթնցնէ խորհուրդի զգացումը:
Ընտանիքին մէջ անդամ մը մտած
փէղիշը հոն կը մնայ միշտ և
կ'ըլլայ անհատական ստացումը
մը, հայրենի ժառանգութիւն մը
զոր ի հարկին կարելի է գնել և
ծախել: Կը պատմուի թէ հա-

րուստ կին մը իր սարուկներէն
հինգը տուած էր մեծահամբաւ
փէղիշ մը գնելու համար: Փէղիշ-
ներուն փոքրագոյն տեսակներէն
խափշիկները մանեկածել կը յե-
ռուն շատ անգամ և կը պահեն
պարկի մը կամ զամբիւղի մը մէջ:
Տեղեր կան, ուր փէղիշները կը
պատրաստեն յարգէ՝ քուրջէ և
փայտէ և կը դնեն զանոնք բա-
ցօղեայ տեղ մը, որպէսզի թա-
փառայած ոգիները դան բնակիլ
անոնց մէջ: Փէղիշը եւս ընտա-
նեկան միութեան իրրել խորհր-
դանշան կը ծառայէ: Ոսկի եղե-
րաց մէջ երբ ընտանիք մը կը
բաժնուի, քուրմը կը փոշիացնէ
անոր փէղիշներէն մին և այդ ըն-
տանիքին բոլոր անդամներուն կը
խմցնէ ըմպելիի մը մէջ լուծուած
փոշին. ատու՛ նախնական միութեան
մը անջինջ դրոշմը կը կար-
ծեն պահել այդ ցրուեալ ընտա-
նիքին մէջ: Փէղիշապաշտութիւնը
կռապաշտութեան նախնական
վիճակն է: Շատ ատեն փէղիշներ
իրրել գիտակից էակ կը ծեծուին
իրենց յարգողներէն և կամ կրակի
մէջ կը նետուին եթէ իրենց
պաշտօնը լաւ չի կատարեն և կը
փնտռուին ուրիշ փէղիշներ:

ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ. — Կախար-
դութիւնը (sorcellerie) որ տա-
րածուած է բոլոր աշխարհի մէջ,
աւելի ազդեցիկ է անբաղաքա-
կիրթ ժողովուրդներու մէջ և
մասնաւորապէս Սփրիկէի սեւե-
րուն մէջ: Կախարդը մարդ մըն է
որ ոգիներուն հետ ունեցած անձ-

նական յարաբերութեանց կը պար-
տի իրերուն բնական վիճակին
վրայ իշխելու իր կարողութիւնը
ուրիշներու չլիսու կամ չա՛հ հաս-
ցնելու: Կախարդին գեր ի վերոյ
առաւելութիւններէն մին ալ է,
ծածկեալը, այսինքն ապաւան
յայտնել, երեւան հանել թաղ-
ուած առարկաները կամ դադաւ-
ադի գործուած եղեւներուն հե-
ղինակները:

Արդեօք այդ կախարդները
խարերաներ կամ շողակրտաներ
ե՞ն, իրենք իսկ արդեօք պատ-
րանքի ենթարկուած չե՞ն:

Սակայն կարելի է անկեղծու-
թեան մեծ բաժին մը հանել այդ
կախարդներուն, նկատելով ոգէա-
պաշտական հաւատալիքներու
ազդուժը, ուրկէ կարելի չէ գերծ
նկատել զիրենք: Սեւերուն մէջ
աւելի յաճախադէպ են մտքի յա-
փշտակութեան, բանդադուշան-
քի, ջղային գրգռումներու իրո-
ղութիւններ քան սպիտակ ցեղե-
րու մէջ:

Կախարդին արուեստը իր ծան-
րակշիռ վտանգներն ալ ունի:
Արդարեւ եթէ կախարդը յաջողի
անձրեւ բերել, կամ եթէ իր գու-
շակութիւնները իրականութիւն
գտնեն և կամ եթէ ժաժմուկնե-
րով, լորցերով և շփումներով
հիւանդը առողջացնէ մեծապար-
գեւ կը մեծարուի. իսկ հակառակ
պարագային մէջ՝ վա՛յ իրեն, կը
մերկացնեն զինքը, կը խոշտան-
գեն, ականջը կը կտրեն, յաճախ
եւս կը սպաննեն: Ետաւ անդամ

նաեւ ձրի ամբաստանութեանց
դո՛հ կ'երթայ, վասնզի սեւին հա-
մար ինչպէս բարի և չար ոգիներ՝
նոյնպէս բարի և չար կախարդ-
ներ կան, թէեւ բարի ոգիներէն
ներշնչեալ, կախարդներու վրայ
բացարձակ վստահութիւն չունի:

Կախարդը ամէն բանէ առաջ
բժիշկ է, թէեւ յաճախ այդ եր-
կու պաշտօնները տարբեր ան-
հատներ ալ կը կատարեն: Ափրի-
կէի և հարաւային արեւմտեան
կողմերը բժիշկ-կախարդը կը կոչ-
ուի նկանկա միելոնկո իսկ գու-
շակ-կախարդը նկանա նդալի:

Բժշկութիւնը ոգէապաշտիկ
իմացման մը հետեւանք է լոկ:
Այսպէս եթէ ո և է նիւթ փրկա-
րար ազդեցութիւն մը ի գործ կը
դնէ հիւանդին մարմնին վրայ, կը
նշանակէ թէ այդ նիւթին մէջ
բնակող ոգին կռուելով հիւան-
դութիւն պատճառող ոգիին հետ
կը վանէ կամ զինաթափ կ'ընէ
զանոնք: Նմանապէս մարձուժի
(massage) կամ երկարատեւ շը-
փումի միջոցաւ կախարդ-բժիշկը
կը կարծէ անարացնել կամ հե-
ռացնել հիւանդին մարմնին մէջ
բնակող չար ոգին: Ափրիկէի հա-
րաւային կողմերը սակայն հի-
ւանդութեանց ստածումը կամ
բուժումը դիւթութեան փոխ-
ուած է. հոն հիւանդին դիւթեալ
ջուր կուտան ըմպելու, այսինքն
այն ջուրը ուր կախարդը իր
ձեռները լուացած է իր ոգիին
զօրութիւնը անոր փոխանցելու
համար:

Կախարդները բժշկի և գու-

շակի արուեստներէն զատ դաստատանական փորձեր ալ ի գործ կը դնեն : Չարադիւթ կախարդութեամբ կատկածելի եղած մարդ մը կամ իրրեւ անհաւատարիմ ամբաստանուած կին մը այդ դաստատանական փորձերուն կ'ենթարկուին և այդ նստին կը նախագահեն տեղւոյն ծանօթ կախարդները : Թոյնով պատրաստուած փորձը ոովորական եղանակն է, եթէ այդ ըմպելին դուրս գայ ամբաստանեալին ստամոքսէն (բան մը որ յաճախ կը պատահի) կը նշանակէ թէ ոգին այդ ամբաստանեալին մարմինին մէջ չէ գտած ուրիշ չար ոգի մը կռուելու և զայն արտաքսելու համար, որով և անմեղութիւնը կը յայտնուի :

Հիւսիսային Կուէնայի մէջ գլխաւորաբար կը գործածուի կարմիր ջուրը, որ մտպուին է հտպտենիներու (mimosa) ընտանիքին վերաբերող մեծ ծառի մը կեղեւին. իսկ հարաւային Կուլինէայի մէջ թուփի մը կարմիր ընկոյզները կը լեսուն : Երբեմն եւս կուտան արբեցուցիչ ըմպելի մը, և եթէ ամբաստանեալը դանդաղէ, նշան մը կը համարուի անոր յանցաւորութեան : Տեղեր կան, ուր նախապատիւ կը համարուի եռացեալ ձէթը, ամբաստանեալը սլարտի անոր մէջ մխել իր ձեռքը և եթէ անմեղ է անվնաս դուրս պիտի հանէ զայն : Անմեղութեան համար կը փորձուի նաեւ հետեւեալը. կախարդի

մը ձեռքով նախապէս դիւթեալ երկու գաւաղաններ կը յանձնուին չորս պատանխներու, որոնք խաչածեւ կը բռնեն զանոնք ծայրերէն, և այլանդակ գրգռումներու մասնուելով կը սկսին վազել կատաղաբար դառնալով, մինչեւ որ գէմքերուն մկանունքները կտրկամին և բերանները փրփրին, և յետոյ շքնառապառ կ'իյնան գիւղին խորճիթներէն միոյն առջեւ. յանցաւորը այդ խորճիթին բնակիչն է, ըլլայ կին ըլլայ այր :

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ ԽԱՓՇԻԿՆԵՐՈՒՆ ՔՈՎ.
— Ոչ քաղաքակիրթ կրօններու մէջ բարոյական նկարագիրը աննշմարելի է գրեթէ : Մէկ քանի ափրիկեան երկիրներու մէջ կը զրուցեն թէ ի՞նչպէս կը կենցաղավարէ մարդ Քալունկայի մէջ, որ է բնակարան մեռելներու : Արեւը կը լուսաւորէ զայն, երբ գիշեր կ'ըլլայ երկրի վրայ, կերակուր, ըմպելի և աղախիններ միշտ պատրաստ են հոն, և նոյն իսկ հոն պար կը բռնեն : Խափշիկին ճշմարիտ դրախտն է Քալունկան : Բայց բարիքի և չարիքի հաստուցման մասին բան մը չեն խօսիր :



ԻՄՅԱՅԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄԱՅԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՊԱՏԿԵՐ. — ՊԱՏՐԱՆՔ. — ԵՐԱԶ

ՊԱՏԿԵՐ. — Հոգեբանութեան մէջ զգացողութեան մը յիշատակը կը կոչուի պատկեր (images): Արդարեւ ամէն զգացողութիւն իր ետեւէն կը թողու առաւել կամ նուազ զօրաւոր և որոշ մնացորդ մը որ է պատկեր ըսուածը: Հոգեբանական այս եղանակաւորութիւն շնորհիւ է որ կըրնանք երեւակայել ձեւեր, գոյներ, ձայներ, շփումներ և նոյն իսկ թէեւ քիչ մը զժուարութեամբ, համեր և հոտեր:

Այս պատկերները կարգ մը միտքերու համար որոշ և զօրաւոր են: Նկարիչներու քով ձեւերու, գոյներու պատկերները զօրաւոր են, երաժիշտներու քով ձայներու պատկերները զօրաւոր են:

ՊԱՏՐԱՆՔ. — Կը պատահի որ կարգ մը պարազաններու մէջ պատկերը զգացողութեան մը չափ զօրաւոր և որոշ կ'ըլլայ, այնպէս որ նոյն այդ պատկերը զգացողութիւն կը նկատեն. այս պարազան կը կոչուի պաւսրանգ (hallucination) կամ մտածութիւն փոխակերպում գէպի զգացողութիւն:

ԵՐԱԶ. — Քունի մէջ պատկերները զգացողութեան հակադ-

դեցութեամբ սանձուած չըլլալով, կ'ազդեն այնպէս մը որ իբր թէ իրական ըլլային: Երազը պատկերներու շարունակութիւն մըն է: (Այս մասին առանձինն պիտի խօսինք:)

Արթուն ատեն իսկ, քունի միջոցու պատկերները յայտնի զգացողութիւններու և կամ առաւել կամ նուազ կատարեալ պատրանքներու փոխուելով կըրնան միանալ մեր զգացողութիւններուն և կամ վանուիլ մասամբ մեր գիտակցութենէն վաղանցուկ կերպով. այս կերպով յառաջ կուգան մտային յափշտակութիւն, բանդադուշանք, դառանցանք և լն:

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԲԱԺԻՆ

ԹԻԻ 62

Գտնել եռասուո լառ մը, որ երեք տարրեր նշանակութիւններ ունենայ, այսինքն ցոյց տայ՝

1. Ժամանակի որոշ շրջան մը,
2. Հող վրայ բարձր տեղ մը,
3. Թիւերու տեսակը:



«Առաւօտ» հանդէսի 29րդ թիւին 60րդ հանելուկին լուծումն է ՄԿՐԱՏ, զոր լուծեցին Պէշիկթաշի Մաքրուհեան վարժարանի աշակերտ Պր. Ա. Յ. Միքայէլեան, և Հ. Մ. Ը. Մ. ի Գում Գարուի մասնաճիւղի անդամներէն Պր. Կարպիս Մանուկեան:

Վ. Է. Պ. Ի. Բ. Ս. Ժ. Ի. Ն.

ՊԶՏԻԿ ԲԱՆՏԱՐԿԵԱԼԸ

ՅՈՎՍԷՓ ՔՐԻՁԷ

11 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳԵՐԻՆ

Ա. — ՊՐԱՆՏԷՆՊՈՒՐԿՑԻՆԵՐՈՒՆ ԶՕՐԱՆՑՔԸ

14րդ օրուան առաւելն, Յովսէփ դեռ կը քնանար, երբ առաւելոյս մը և կոպիտ ձայն մը զինքը արթնցուցին. իր վակօնին դուռը դեռ նոր բացուեր էր:

— Շո՛ւա, վա՛ր իջի՛ր, պոռաց Քիւման:

Տղան վար ցատկեց, իր աչքերը չլացան լոյսէն, քանի որ բաւական ատեն լոյս չէր տեսած և ինկաւ դետին: Կոպիտ ձեռք մը զինքը նետեց քարափին վրայ: Հասած էր:

Բ. — ՅՈՆ ՊԻԼԼԷՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՉ

Յովսէփ Քրիզէի ճամբորդութիւնը վերջացած չէր ոակայն: Կարգ մը զինուորներ, քանի մը պաշտօնեաներու օժանդակութեամբ կ'աճապարէին պարպել վակօնը: Գնդապետին զրկած բոլոր կարասիները և առարկաները դուրս հանելով կը դիզեն և յետոյ գնդապետին տիկնոջ զրկած երկու կառքերուն մէջ կը տեղաւորէին:

Կէսօրին ճամբայ ելան. տաժանագին կը քալէին աւազուտ

դաշտի մը մէջէն, որուն տխրութիւնը աւելի կ'աւելցնէին սկարեղեւիններ և կանանչ ճաշիճներ:

Ժամը 4ի ատենները վերջապէս հասան խոշոր և դեղին շէնքի մը բակը:

Այդ շէնքը Փօն Պիւլլէր ընտանիքին բնակարանն էր: Ան կը վերաբերէր ընտանիքին անդրտնիկին՝ կոմս Օթֆրիտ Փօն Պիւլլէրի որ հոն կը բնակէր իր կնոջ Էտվիկի և երկու աղջիկներուն Շառլօթ և Մարկարիթին հետ:

Պատերազմի երթալու ատեն, գնդապետ Փօն Պիւլլէր իր կինը Ավիուսթան և երկու երկուորեակ տղաքները 12ական տարեկան, Բաւլոսը և Ռէթինալտը, Շթէթինէն հոս զրկած էր:

Երկու կիները և չորս տղաքները բակը կը գտնուէին և քանի կառքէն կ'իջեցնէին առարկաները, 12 ձեռք կը յարձակէին առնոց վրայ, փոշիները մաքրելով կը բանային տուփերը:

Այդ միջոցին կոմսուհի Էտվիկ, մանիշակագոյն մետաքսեայ վերաբերու մը վրան տոնելով որնառնկներուն մէջէն, զարդարուած

էր, իսկ տիկին գնդապետը բարիզեան գլխարկ մը գլուխը անցընելով շնորհալի ձեւեր կ'առնէր: Եւ տիրուն գլխարկին տակ, կարմիր աչտերով և ուռած ճակատով իր խոշոր դէմքը կը նմանէր վարդադոյն բիծերով դգուծի մը:

Աղջիկները կը դառնային մետաքսեայ էշառքներով և ժանեկաւոր ֆիշիւներով:

Երկու ստահակներուն դալով, անոնցմէ մին Հանրի Բ.ի սուր մը, իսկ միւսը թրքական սուր մը դառած ըլլալուն շատ երջանիկ, կը ցատկէին Յովսէփի շուրջը գլուխ ճաթեցնելու աստիճան պռոպով. «Անկցին Ֆրանսացիները, սատկին Ֆրանսացիները:»

Կացութեան տիուր ըլլալուն հակառակ պզտիկ Ֆրանսացին այս Բարեկենդանի տեսարանները դիտելով խնդալու փափաքը ունեցաւ:

Բայց նոր անձ մը խիստ իրականութիւնը Յովսէփի յիշեցնելու գործը վրան առնել սկսաւ:

Այդ անձը կոմս Օթֆրիտն էր որ այնչափ չար կ'երեւէր, որքան ծիծաղելի՝ իր խոշոր գլուխը, կարմիր և մանիշակադոյն դէմքը, մինչեւ ականջները ճեղքուած լայն բերանը, երկայն և դուրս ցցուած իրանը և պրկուած սրբունքները:

Հակերուն փակուիլը դիտելէ վերջ, կոմս Օթֆրիտ կ'առաջանայ դէպի պզտիկ Ֆրանսացին, որ անկիւն մը քաշուած՝ աթոռի

մը վրայ նստած էր, ըսաւ կոպիտ կերպով:

— Ոտքի՛ ելի՛ր, լակո՛տ և ըսրեւ տուր:

Այդ վայրկեանին Քիւման յանձնեց կոմսին լայն պահարան մը: Կոմսը այդ պահարանէն հանեց նամակ մը և կտրուց դանդաղօրէն: Քիչ յետոյ սարսափելի դիտուած մը պիտի գիտցնէր անոր պարունակութիւնը որ անա.

«Սիրելի և յարգելի մեծ եղբայրս՝ կոմս Օթֆրիտ Ժոն Պիւլլէր, արքայական խորհրդական երկրագործութեան,

«Շատ սիրելի քոյր՝ կոմսուհի Էտվիկ Ժոն Պիւլլէր, Պիւլլմունսթէրի և Սթօլթէի արքայական վարժարաններուն խորհրդական,

«Գորովալի կինս՝ գնդապետուհի Լիվկուտտա, ծնեալ Վալթէշթայն,

«Ողջ եմ, չեմ վիրաւորուած, երկրորդ կարգի երկաթեայ խաչ ունիմ, յաղթանակէ յաղթանակ կ'երթանք, տասը օրուան մէջ Բարիզի պողոտաներուն մէջ պիտի պատինք, երեք ամիսէն պիտի վերադառնամ:

«Այս նամակին հետ պիտի ստանաք քիչ մը աւար, զոր յաղթականօրէն գրաւեցի. ասիկա դեռ առաջին առաքումս է,

«Զանազան առարկաներու հետ պիտի գտնէք պզտիկ ֆրանսացի մը, որուն անունն է Յովսէփ Քրիզէ: Ասիկա պզտիկ ստահակ մըն է որ մեզ նախատես, ես անոր խնայեցի, որովհետեւ

մեզի օգտակար պիտի ըլլայ: Քիչ մը զարգացում ունի, գերմաներէնը գէշ կը խօսի, բայց մաքուր կը խօսի ֆրանսերէնը:

«Ան օրական երկու ժամ պիտի սովորեցնէ իր լեզուն իմ զաւակներուս, իմ ազնիւ եղբօրս աղջիկները կրնան ներկայ գրտնուիլ իր դասերուն և օգտուիլ:

«Մնացած ժամերուն դուք զայն կրնաք գործածել ձեր ուղածին պէս: Բնաւ մի մեղքնաք:

«Ձեզ ամենքդ կ'ողջագուրեմ, կատարեալ յաղթանակի մը և շուտ վերադարձի մը վստահութեամբ: Աստուած մեզ հետ:

Ձեր եղբայրը և ամուսինը Գնդապետ Փօն Պիւլլէր երկրորդ կարգի երկաթեայ խաչով պատուուած»

Յաջորդ օրը, արշալոյսին, առաջին սպասաւորը, Իւլլիֆ, եկաւ արթնցնել Յովսէփը որ ձեղնայարկի մը մէջ հին անկողնի մը և բամպակէ վերմակի մը տակ կը քնանար:

«Ոտքի ելիր, ստահակ, ահա հրամանը, ժամը վեցէն մինչեւ ութը պիտի ներկես կօշիկները՝ 13 զոյգ, ժամը ութէն տասը պիտի խոզանակես Պատուոյ սանդուխին գորգերը, յետոյ ֆրանսերէն դաս պզտիկ պարոններուն և Փօն Պիւլլէրի օրիորդներուն, ճաշէն յետոյ մինչեւ երեկոյ պիտի դարձնես շտեմարանին մէջի արմատ կտրող մեքենան, պէտք է 28 կենդանիի համար ուտելիք պատրաստել: Քու ճաշդ աշխա-

տութենէդ կախում պիտի ունենայ:»

Պզտիկ գերին ասկէ վերջ տխուր կեանքի մը և Փօն Պիւլլէրի տան տարապարհակ աշխատութիւններուն մէջ հաստատուեցաւ:

ՅՈՎՍԷՓ ՔՐԻՉԷԻ ՅՐԱԳԻՐԸ

Մեր պատմութեան այս կէտէն սկսեալ, լաւագոյն բանը ըրած պիտի ըլլանք ընդօրինակելով Յովսէփի օրագիրը զոր յաջողած էր բռնել Բօմբերանիոյ մէջ գերի ինկած ատեն:

Փոքրիկ գերին հաստատամտօրէն և եռանդով գրի առած է իր տուայտումները, տառապանքները և երբեմն իր ողբերգական արկածները:

ՏԵՐԱՊԵՐԶԱԿ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

«... Փօն Պիւլլի տան մէջ անցուցած գերութեանս առաջին հինգ ամիսներուն, իմ բոլոր տարապարհակ աշխատութիւններս առանց կարեւոր միջադէպի կատարեցի և սակայն առաջին սպասաւորը՝ Իւլլիֆ երբէք մեղմ չէր:

Չայն դռնացնելու համար, կօշիկները այնչափ լրջօրէն կը խոզանակէի և կը փայլեցնէի որ ան կրնար անոնց մէջ տեսնել իր դեղին և քիչ հաճելի դէմքը:

Իմ մաքրած գորգերուս վրայէն ճերմակ լաթ մը կը քսէր գտնելու համար փոշիի ամենափոքր հետք մը:

Միւս կողմէ մտաւորական աշխատութիւնս ինձ զգուանք կը պատճառէր :

Չորս պղտիկ Պիւլլէրներուն ֆրանսերէն դաս տալու արարողութիւնը տարապարհակ աշխատութիւններուս ամենէն գարշելին կը կազմէր : Ոչ թէ անոր համար որ իմ պղտիկներս անխելք և կամ ծոյլ էին , անոնք ըմբռնելու գերմանական դանդաղութիւնը կը փոխարինէին ճիգով և յարատեւութեամբ , այլ անոր համար որ անոնց սմանդուկ չարութիւնը զանոնք գարշելի դարձուցեր էր :

Անոնք կողոպտուած իրեղէններուն հասած աստն յայտնեցին տեսակ մը կոշտ ուրախութիւն , զոր իմ վրաս գէշ տպաւորութիւն գործած էր և մանաւանդ ինձ հանդէպ յայտնուած նենգամիտ ակնարկութիւնները և կատակները :

Ինձ այնպէս կը թուէր թէ բարկութենէ աւելի գութ կը ներշնչէի , մանաւանդ իմ տարիքս տղոց : Որովհետեւ արդէն անոնց բնաւ չարիք չէի ըրած :

Իմ միամտութեանս մէջ , կը խորհէի թէ անոնք՝ որ բաւական երջանիկ էին , զիս տեսնելով դժբաղդ , երկրէս եւ սիրելիներէս հեռու , պիտի ջանային թեթեւցնել իմ նեղութիւններս և մեղմացնել գերութիւնս :

Երբ մարդ երջանիկ ու երիտասարդ է , պէտք չէ որ ունենայ բնական տրամադրութիւն մը աւելի զգայուն և դժատիրտ երեւալու :

Ո՛հ , այո , իմ չորս պղտիկ Բրուսիացիներս միայն ինձի միասել և զիս ծաղրել կ'երազէին : Կարծես թէ անոնց գլխաւոր մտահոգութիւնը գերութեանս հոգերը և թշուառութիւնս բազմապատկելի եղած ըլլար :

Այս չարութիւնը անոնց քով ինքնածին էր , անոնց բնութեան մէջ բոյն դրած էր :

Ո՛չ թէ միայն անոնք ինձ հանդէպ վատ և չար էին այլ իրարու նկատմամբ ալ լաւագոյն զգացումներ չունէին :

Եթէ դիպուածաւ , անոնցմէ մէկը , մանչ թէ աղջիկ , գէշ նիշ մը առնէր զոր ես պարտական էի տեսրակի մը վրայ նշանակել դասերուն և պարտականութիւններուն լաւը կամ գէշը որոշելու համար , միւսներուն դէմքին վրայ հաճոյք մը կ'երեւէր :

Որովհետեւ գեթ նիւթն հետեւանքը կ'ըլլար այն ապտակները , որ մայրը կամ մօրաքոյրը չէին իննայեք իրենց զաւակներուն :

Պէտք էր որ շատ անգամ գէշ նիշեր չի տայի , նոյնիսկ երկու երեք անգամ ապուշ գլծասրտութեամբ մը փորձուեցայ վար նիշ չի տալ , թէեւ նիշերուն անբաւականութիւնը կը հաղորդուէր ծնողաց պղտիկ ընկերներու կողմէ : Ապտակները նորէն կուգային , միայն թէ ես ալ իմ բաժինս կ'ունենայի :

Լրտեսութիւնը և մատնութիւնը դղեակին մէջ ճարակած էր . շատ անգամներ ես ինքս

սպասաւորները ահանջնին դրան
փակցուցած վիճակի մէջ բռնեցի:

Ամէն օր փոխադարձ տեղե-
կագիրներ և մասնութիւններ:
Նոյն իսկ երկու քենիներ զիրար
կը լրտեսէին կամ լրտեսել կու-
տային:

Այս կարգի գործեր, որոնք
Ֆրանսայի մէջ շատ ատելի են,
քնաւ ամօթ չեն համարուիր Գեր-
մանիոյ մէջ: Անշուշտ կրնաք
մտածել թէ ես ալ հսկողութեան
կամ դիտողութեան ներքեւ կը
գտնուէի միշտ: Հետեւաբար մեծ
զգուշութեամբ կը խմբագրէի նի-
շերու տետրակը և կը ջանայի
ուղիղ ըլլալ:

Ձէի կասկածեր որ այս խըս-
տութիւնը, որ ամենէն աւելի օ-
րինաւոր էր, պատճառ պիտի ըլ-
լար ճշմարիտ ողբերգութեան մը:

Առտու մը, պղտիկ Շառլօթ
ինծի կը յանձնէր շատ խեղճ շա-
րագրութիւն մը և իր դասէն
բառ մը իսկ չէր գիտէր. «շատ
գէշ» պիտի գրէի, բայց աղջիկը
լալով ըսաւ. «Պղտիկ պարոն
Ֆրանսուայի, կ'աղաչեմ, գոնէ մի-
ջակ գրեցէ՛ք»:

Եւ փութաց բացատրել:

«Այսօր նախաճաշին պիտի ու-
նենանք սերով շօքօլա. եթէ գէշ
նիշ տաք, պիտի գրկուիմ անկէ
ու ես հիւանդ պիտի ըլլամ, եթէ
չուտեմ անկէ»:

Կը փափաքէի անոր պատաս-
խանել թէ ան աւելի պիտի հի-
ւանդանար, եթէ անկէ ուտէր,
մանաւանդ իր սովորական որ-

կրամօլութեամբ: Բայց, երկար
ատենէ ի վեր իմ աշակերտնե-
րու և կեղծաւորութիւնը և չարու-
թիւնը հասկցած ըլլալով կը խու-
սափէի անոնց հետ ընտանեանալէ:

Դալով Շառլօթի խնդրանքին,
եթէ զայն նպաստաւոր կերպով
ընդունէի, իմ ներողամտութիւնս
արդէն պիտի յայտնուէր և բանի
մը պիտի չի ծառայէր:

Նօթագրեցի «շատ գէշ»:

Երբեք չէի կարծեր թէ սերով
շօքօլայի սէրը այսչափ սաստիկ
զգացումներ պիտի ներշնչէր:

Յանկարծ կատղելով պղտիկ
պօշր վրաս նետուեցաւ և ճան-
կրտեց. բնագլխաբար զայն հրեցի-
ան ինկաւ գետին, փռուեցաւ և
տհուելի աղաղակներ արձակեց,
իբրեւ թէ զինքը խեղդել ուզած
ըլլայի. մայրը և մօրաքոյրը վրայ
հասան և պատճառը հարցուցին:

«Պղտիկ Ֆրանսուային զիս ծե-
ծեց, ըսաւ Շառլօթ»:

«Թշուառակա՛ն դու, կոմսին
և կոմսուհիին աղջկան ձեռք
վերցնե՛ս, ինչ յանդգնութիւն»:

Ու այս ըսելով մայրը դէմքիս
երկու բռունցքի հարուած իջե-
ցուց, այնչափ սաստիկ որ քիթս
արիւնիլ սկսաւ:

Կը կարծէի թէ ուսուցչական
պաշտօնս ձեռքէս պիտի առնէին,
բայց այնպէս չեղաւ:

Շառլօթի բարի քոյրը և բարի
զարմիկները անշուշտ իրենց տե-
ղեկագիրները տուած էին. ուս-
տի սկսայ շարունակել Ֆրանսե-
րէն դասերս, միայն թէ այս դա-
սերուն մէջ թեթեւ փոփոխու-
թիւն մը մտցուցի:

Ինքնիրենս ըսի, իսկապէս ապուշութիւն պիտի ըլլար այս չորս ազոց ֆրանսերէնը իր իսկական մաքրութեամբ սովրեցնել: Կը դբօսնուի անոնց կրկնելով ու կրկնել տալով արկողեան բառեր:

Ասիկա մեր դբօսանքն էր, Շառլըմաներ լիսէին մէջ դադարի պահերուն, փողոցներու և Բարի-դի կարգ մը թաղերուն մէջ խօսուած այս լեզուով վարժուիլ, որովհետեւ այս նիւթը բաւականաչափ ծանօթ էր ինծի:

Հաճոյք էր լսել ինձ համար, այս չորս Բրուսիայիներուն գոռոզ չքեղութիւնով մը կրկնելը, իբրեւ թէ ֆրանսերէն թատրոնի մը խաղացանկը եղած ըլլար, և այն բացատրութիւնները որ պիտի դարձնէին Մօնմարթրի պղտիկ սրիկաները և ծեր կառապանները:

Եւ բնականաբար, այս քմածին մանկավարժութիւնը կ'ընդգրկէի, այն ատեն երբ վստահ ըլլայի թէ դրան ետեւ անխորհուրդ վկաներ չկային:

Այս խաղին մէջ քաղցր վայրկեաններ կը գտնէի:

Ո՛չ միայն ասիկա կը թուէի ինձ օրինաւոր փոխարինութիւն մը, այլ ինձ համար բարելաւիչ դբօսանք մը:

Կը դարմանայի դիտելով որ աշակերտներս չէին վշտանար ապամայ ժպիտներէս, և աչքերուն մէջ նարճատող գօրութենէն:

ՋՐՀԱՆԿԻՐՆԵՐՈՒ ՓՈՐՁՐ

«... Կեանքը ինձ համար շատ տխուր կերպով կը շարունակէ. նոյնպէս հասած բոլոր լուրերը, ճշմարիտ կամ սուտ, դիս միտիթարելու բնոյթ չունին. ֆրանսացւոց կորսնցողած մեծ կռիւներուն վրայ կը խօսին: Լիլ, Ամիէն և Լան գրաւուած էին և մինակս, կորսուած Բօմէրանիոյ այս վայրենի անկեան մէջ, կը մտածեմ ֆրանսայի և սիրելի հօրս վրայ:

Մեռած, վիրաւոր է թէ արդեօք ան ալ դերի է:

Երկրին հաւար արտագոյ կարգի դէպք մը եկաւ դիս թօթափել իմ տխուր մտածումներէս:

Ջրհանկիրներու մեծ փորձ մը տեղի ունեցաւ: Արարողութիւնը այնքան ծիծաղաշարժ եղաւ որ կ'արժէ պատմել, ասիկա պիտի դնէ ուրախ չեչտ մը այս օրագրութեան մէջ որ տխուր անցքերով լեցուն է:

Կոմս Օթֆրիտ Թօն Պիւլլէր Ջրհանկիրներու հարիւրապետ էր դրացի քաղաքին:

Խաղաղութեան ժամանակ ան 27 հոգիի կը հրամայէր, Ջօրահաւաքի պատճառով 9 հատը առերէին այս պակասաւոր իրութեամբ իսկ ուղեց տօնել աւանդական տօնը:

Առաւօտէն սկսեալ Ջրհանր գործել տուաւ, ժամը 9 ին առաջնորդեց իր մարդիկը դղեակին քովը. հոն, հնդկահաւի պէս գոռոզ, իր մարդոց զանազան շարժումներ ընել տուաւ:

(Շար.)

ԱՐԵՒԵԱՆ ԸՆԿ

ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ԶԱՏՏԷ, ԿԻՒՆԷՇ ԽԱՆ

ՏՔԹ. ՆԵՐՍԵՍ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ՝ ականջի, քիթի եւ կոկորդի
հիւանդութեանց
Հիւանդ կրնդունի կէս օրէ առաջ Դուս
գարու Զարիֆեան դեղարանը իսկ կէս
օրէվերջ Պահճէ Գարու, Արիկ Իւթիւնեան
դեղարանի վերնայարկը. 35

Փաստաբան

Մ. Ա. ԱԳԸԼԼԸԵԱՆ

Թարագերլար, Սաաթի Խան Թիւ 9

ՏՈՔԹ. Յ. ԵԼՐԱՆՈՍԵԱՆ

Մասնագէտ

Ներքին եւ կանանց հիւանդութեանց եւ
Մանկաբարձ
Գուսգարու Ամերիկեան Դեղարանի կից

ԱՆԳԼ. ՇՈԳ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ներածում-Արածում

Յանձնակատարութիւն
Ներկայացուցչութիւն
Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՂԶԷ ԳԱՔՈՒ, Թ. 44
Հեռ. Սթ. 16 Ն. Տ. Օ. 599

Դերձակատուն

Ս. ՍՎԱՃԵԱՆ - Մ. ՏԵՐՄԵՐԿԵՐԵԱՆ

Զարեք Գարու, Իսկէնսեր Պողագի, 29
Ճաշակաւոր եւ դիւրամատչելի
հագուստ ունենալու եւ պատշաճ
նորոգութիւններու համար դիմել
յիշեալ դերձակատունը: Փորձ մը
քաւական է համոզուելու համար:

Ա. Կ. Ն. Ա. Բ. Ո. Յ. Ժ

ՏՔԹ. Մ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ

Հասցէ՝ Պահճէ Գարու, Իքի Գարուլու
դեղարանը, կէսօրէ վերջ. 32

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՍԱՀԱԿ ՍՎԱՃԵԱՆ

Մեծ ՇՈՒԿԱՅ ՔԱԼՓԱՔՃԻՆԵՐՈՒ ԶԱՏՏԷՆ
ՔԻՒՐՔՃԻՆԵՐՈՒ ԴՐԱՆ ԶԻՇՏ ԴԷՄԸ Թ. 9
Ճաշակի տէր տիկիններու եւ օրիորդ-
ներու կը հաղորդենք թէ Տիար Սահակ
Սվաճեան Եւրոպայէն բերել տուած է
մերենայ մը որով ասէն տեսակ կեր-
պաններու վրայ վերջին ձեւով եւ հա-
մաշափօրէն ֆիլիսէ, ագօրտ կը կոտ-
րուի: Առիթէն պէտք է օգտուիլ. 41

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան

նախանձախնդիր անձերուն

ՏՔԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ՐԷԻՍԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ի դիւրութիւն իր յարգոյ յաճախորդնե-
րուն եւ համակիրներուն փոխադրուած է
Պոլիս, Նոր Նախակատան կից, Նիւզհէթ
պէյի դեղարանը, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակռաներու հիւանդութիւններ. կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբաճաշակ ատամնաշարեր, գուրօններ,
սղիւններ եւ բիւօներ. 40

Աւամնաբոյժ

ՏՔԹ. ՏԻԳՐ. ԵՂԻԿԵԱՆ

Պապը Ալի Օրխան պէյ խան թիւ 22
Գիտական խնամք եւ գեղարուեստական
ամենանուրբ ճաշակ, կատարեալ ճշդա-
պահութիւն եւ մաքրութիւն.

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱԶԱՏՈՒԲԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Պահճէ Գարու: Մէյվախօժ Խան—Հեռաձայն Սթամպուլ 319



ԱՄԵՐԻԿԱ.

ՃԱՄԲՈՐԴՈՂՆԵՐՈՒՆ

ՊՈԼԻՍԵՆ

ՈՒՂՂԱԿԻ ՆԻՒ-ԵՐԲ

Վ Լ Ա Տ Ի Մ Ի Բ

Ֆրանսական դրոշակով, Ռուսական կա-
մաւոր նաւատորմէն ՎԼԱՏԻՄԻՐ անուն
խոշոր թրանսաքլանքի նաւը, մասնաւո-
րաբար երրորդ կարգի նամբորդներու հա-
մար յարդարուած, եւ օժտուած ելեփորա-
կանութեամբ եւ անքել հեռագրով:

ՅՈՒՆՈՒԱՐ 25Ի ԱՏԵՆՆԵՐԸ,

պարբիւյ Քարապէն ՈՒՂՂԱԿԻ ՆԻՒ-

ԵՐԲ պիտի մեկնի, **ԱՌԱՆՑ ԱՔԹԱՐ.**

ՄԱՅԻ.

Փութացեալ այժմէն արձանագրուիլ եւ տեղեկիւ ապահո-
վել: Ուղղակի մանրեկա մեկնողներու համար աւելից ա-
ւելի գեղեցիկ առիթ չի կրնար ըլլալ:

Հեռ. Բերա՝ 263

Հայ նամբորդներու միակ ներկայացուցիչներ

Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ա. ՏԻԶԵՆՃԵԱՆ

ՊԻՐԻՆՃԻ ԿԻՄԻՒՇ ԽԱՆ, ՄՕՄԶԱՆԷ (ՂԱԼԱԹԻԱ)